ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 օգոստոսի 2024 թվականի N 1322 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ի N 1450-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Ներդրումների ներգրավման ծրագիրը հաստատելու մասին» N 1450-Լ որոշման N 2 հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) հավելվածի 7-րդ կետում «2024 թվականի դեկտեմբեր» բառերը փոխարինել «2025 թվականի հունիս» բառերով.

2) հավելվածի 8-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) հավելվածի 12-րդ կետից հանել «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)» բառերը.

4) հավելվածի 16-րդ կետում «օտարերկրյա» բառից հետո լրացնել «կամ տեղական» բառերով և հանել «Փոխվարչապետի գրասենյակ» բառերը.

5) հավելվածի 17-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

6) հավելվածի 18-րդ կետից հանել «, ինչպես նաև նախատեսված կլինի ուղիղ ներդրումների իրականացման համար հարմարավետ, անվտանգ հարթակ» բառերը.

7) հավելվածի 19-րդ կետից հանել «Փոխվարչապետի գրասենյակ» բառերը.

8) հավելվածի 20-րդ և 21-րդ կետերում «2024 թվականի դեկտեմբեր» բառերը փոխարինել «2026 թվականի դեկտեմբեր» բառերով և հանել «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ (համաձայնությամբ)» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

22.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ